

## ՎԵՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ



### ՌԻՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ



Սիրելի՛ հաճախորդ, տեղեկացնում ենք, որ Ձեր իրավունքները կարող են պաշտպանվել ինչպես դատական կարգով, այնպես էլ Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:



Դատարան դիմելու դեպքում Ձեր և Ռեզոլուշն Ապահովագրական Բրոքեր ՍՊԸ-ի միջև ծագած վեճը լուծում է դատարանը: Դուք կարող եք դիմել դատարան բողոքի քննության ցանկացած փուլում: Դատարանի վճիռը չի կարող վերանայվել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից:

Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու դեպքում Ձեր և Ռեզոլուշն Ապահովագրական Բրոքեր ՍՊԸ-ի միջև ծագած վեճը լուծում է Հաշտարարը՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայություններն ԱՆՎՃԱՐ են:

Բողոք ունենալու դեպքում Դուք նախևառաջ պետք է դիմեք Ռեզոլուշն Ապահովագրական Բրոքեր ՍՊԸ-ին: Ռեզոլուշն Ապահովագրական Բրոքեր ՍՊԸ-ն պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Ձեր բողոքին: 10 օրից պատասխանը ստանալուց հետո կամ, եթե պատասխան չեք ստացել, առանց դրա, Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե՝

1. Բողոքը Ռեզոլուշն Ապահովագրական Բրոքեր ՍՊԸ-ին ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր,
2. Դուք չեք պահանջում դրամական կամ այլ գույքային հատուցում, Ձեր կողմից պահանջվող հատուցումը գերազանցում է 10 միլիոն դրամը (կամ դրան համարժեք արտարժույթով գումարը),
3. Ռեզոլուշն Ապահովագրական Բրոքեր ՍՊԸ-ի պատասխանը ստանալուց հետո անցել է ավելի քան վեց ամիս,
4. Ձեր կողմից բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել մինչև 2008թ. օգոստոսի 2-ից առաջ:



Ձգուշացնում ենք նաև, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե այն քննվում է դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) վճիռը:



#### Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ

Հաշտարար՝ Փիրուզ Սարգսյան  
Հասցե՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1,  
«Էրեբունի պլազա» բիզնես կենտրոն 4-րդ հարկ, 411 սենյակ  
(010) 582 421  
Հեռ.՝  
Էլ. հասցե՝ [info@fsm.am](mailto:info@fsm.am)  
Ֆաքս՝ (010) 582 421  
Կայք՝ [www.fsm.am](http://www.fsm.am)



Սիրելի՛ հաճախորդ, հայտնում ենք Ձեզ, որ «Ռեզոլուզն Ապահովագրական Բրոքեր» ՍՊԸ-ն ամբողջությամբ չի հրաժարվել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից:

Դա նշանակում է, որ «Ռեզոլուզն Ապահովագրական Բրոքեր» ՍՊԸ-ն կարող է որոշ դեպքերում դատական կարգով վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից «Ռեզոլուզն Ապահովագրական Բրոքեր» ՍՊԸ-ի դեմ կայացված որոշումները:



**Դուք** կարող եք նաև բողոքներով դիմել Կենտրոնական բանկ: Տեղեկացնում ենք, որ Կենտրոնական բանկն իրավասու չէ լուծել Ձեր և Ռեզոլուզն Ապահովագրական Բրոքեր ՍՊԸ-ի միջև վեճերը, սակայն կարող է Ռեզոլուզն Ապահովագրական Բրոքեր ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, եթե պարզվի, որ Ռեզոլուզն Ապահովագրական Բրոքեր ՍՊԸ-ն խախտել է օրենքի պահանջները:



### ՀՀ Կենտրոնական բանկ

Հասցե՝ 0010, ք.Երևան, Վազգեն Սարգսյան 6  
 Հեռ.՝ (010) 592 697  
 Էլ. հասցե՝ [chairman@cba.am](mailto:chairman@cba.am)  
 Ֆաքս՝ (010) 565 496  
 կայք՝ [www.cba.am](http://www.cba.am)